



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

**Ե Ր Ե Վ Ա Ն - 2018**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից 2017 թվականին կատարված հիմնական աշխատանքների վերաբերյալ

2017 թվականի ընթացքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) աշխատանքային գործունեության հիմքում դրված էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումների մասով ընդունված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

2017 թվականին Կոմիտեի կողմից ապահովվել է ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1105-Ն որոշմամբ հաստատված հավելվածներով ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների՝ Կոմիտեին վերաբերող (Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների N 1 հավելվածի 116 և 118-րդ կետեր և N 2 հավելվածի 108-112-րդ կետեր) պահանջները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները համակարգում կառուցվածքային բարեփոխումների, ջրամատակարարման տևողության ավելացման, ջրի որակի բարելավման, ինստիտուցիոնալ բարեփոխումների խորացման, վարձակալության պայմանագրերի վերահսկման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգի ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այլ ուղղություններով: Տարվա ընթացքում մամուլում տեղ են գտել ոլորտին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ և իրականացվել են մամուլի ասուլիսներ:

***Ջրային տնտեսության ոլորտում ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ 2017 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.***

1. Համաձայն ՀՀ կառավարության 14.08.2014թ. N883-Ն և N888-Ն որոշումների 5 ջրամատակարար ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի (որպես միասնական գույքային համալիր) օգտագործման իրավունքը 2017թ. հունվարի 1-ից վարձակալությամբ փոխանցվել է մեկ կառավարչի՝ 15 տարի ժամկետով:

2016 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Վեոլիա Օ Ժեներալ դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև ստորագրվել է վարձակալության պայմանագիր, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից: 2017 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ապահովվել է 1713.0 մլն դրամի չափով ՀՀ պետական բյուջեի մուտքեր:

Համաձայն Վարձակալության պայմանագրի մրցութային կարգով իրականացվել է անկախ տեխնիկական աուդիտորի ընտրություն: Անկախ տեխնիկական աուդիտոր է ընտրվել Գերմանական «Սաքսեն Վասսեր» ընկերությունը («Sachsen Wasser GmbH»), որի հետ 2017 թվականի սեպտեմբերի 13-ին կնքվել է պայմանագիր՝ պայմանագրային առաջին 5 տարիների ընթացքում վարձակալի աշխատանքի և նվաճումների տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման ամենամյա աուդիտի, ինչպես նաև պայմանագրով նախատեսված այլ աշխատանքների իրականացման համար:

Համաձայն Վարձակալության պայմանագրի, Վարձակալը պարտավոր է իրականացնել պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիր (այսուհետ՝ ՊԿԱԾ): Այս ծրագրի նպատակն է ընդունման պահին վարձակալված գույքի վիճակի գուտ պահպանումից բացի, ապահովել դրա վիճակի որոշակի բարելավում:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված 2017 թվականի ՊԿԱԾ-ի նախագիծը Կոմիտեի կողմից, համաձայն Վարձակալության պայմանագրի՝ ուսումնասիրվել, վերլուծվել, և Վարձակալին են ուղարկվել Վարձատուի առարկությունները: Պայմանագրով սահմանված ժամկետում Վարձակալի կողմից ներկայացված 2017 թվականի ավարտական ՊԿԱԾ-ն տրամադրվել է նաև անկախ տեխնիկական աուդիտորին: <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն, մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը, պետք է ներկայացնի հաշվետվություն 2017 թվականի ՊԿԱԾ-ի կատարման արդյունքների վերաբերյալ: Համաձայն Վարձակալության պայմանագրի, 2017 թվականը հանդիսանում է պայմանագրային առաջին տարի, ինչպես նաև բազիսային տարի կատարողական ցուցանիշների համար: Վարձակալը պարտավոր է պատրաստել և ներկայացնել բազիսային տարվա տվյալների հաշվետվություն, որը պետք է ներառի կատարողական ցուցանիշների ելակետային տարեկան արժեքները արդեն իսկ հաստատված մեթոդաբանության համաձայն: Կատարողական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության վերաբերյալ անկախ տեխնիկական աուդիտորին վերապահված է մասնագիտական կարծիքի ներկայացման իրավասություն, որը կներառվի անկախ տեխնիկական աուդիտորի հաշվետվության մեջ:

Վարձակալության պայմանագրով նախատեսված հաշվետվությունների մասով Վարձատուն իրականացրել է Վարձակալի կողմից 2017թ. ընթացքում ներկայացրած հաշվետվությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը, և անհրաժեշտության դեպքում Վարձակալության պայմանագրով սահմանված կարգով ներկայացրել է իր դիրքորոշումը: Վարձակալության պայմանագրով նախատեսված մեկանգամյա հաշվետվությունները՝ Վարձակալի գործունեության տարբեր ուղղությունների պլաններն ու ռազմավարությունները ուսումնասիրվել և տրամադրվել են անկախ տեխնիկական աուդիտորին՝ հաստատման համար:

Կոմիտեում ստեղծվել է գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչություն, որն ամբողջությամբ համալրված է համապատասխան կադրերով: Գերմանական զարգացման բանկի (KfW) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել է գույքի կառավարման խորհրդատուի մրցույթ, որի գործառույթներից է, ինչպես խմելու ջրի և ջրահեռացման վարձակալությամբ հանձնված գույքի հաշվառման, գրանցման, պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի իրականացման հաշվետվությունների արձագանքման մասով խորհրդատվության ապահովումը, այնպես էլ ոռոգման համակարգի գույքի հաշվառումը:

Ջրային տնտեսության բնագավառում օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ֆինանսավորվող վարկային ծրագրերն արդյունավետ կառավարելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N191-Ա որոշում: Ներկայումս ջրային ոլորտի ծրագրերի իրականացման լիազորությունները վերապահվել են <<Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ-ին:

Ավարտվել է Երևանի Աերացիայի մաքրման մեխանիկական կայանի շինարարությունը: Ծրագրի ավարտով պայմանավորված՝ դադարեցվել է <<Համայնքային զարգացման ծրագրերի գրասենյակ>> պետական հիմնարկի գործունեությունը:

Մասնագիտացված Օպերատորի կողմից չսպասարկվող ՀՀ շուրջ 577 գյուղերում պատշաճ մակարդակի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ապահովման նպատակով նախատեսվում է ստեղծել նախադրյալներ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:

Այս գործընթացի հիմքում պետության կողմից տարվող քաղաքականության հիմնական ուղղվածությունն է՝ պետություն-մասնավոր տնտեսավարող (ՊՄԳ) փոխշահավետ համագործակցության ապահովմամբ:

Նշված գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման համար պահանջվող ներդրումների ծավալը չափազանց մեծ է, բացի այդ, դրանց ցրված տեղաբաշխման պատճառով շահագործման ծախսերը նույնպես բավականին բարձր են, որի պատճառով բարձր են ստացվում նաև ծառայությունների սակագները:

Ծառայությունների համահարթեցման նպատակով խնդիր է դրված այդ գյուղերում ապահովել միասնական օպերատորի հետ կնքված պայմանագրում ամրագրված կատարողական ցուցանիշների արժեքներին համադրելի ցուցանիշներ:

ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարության և ֆինանսավորման ծրագրի իրականացման նպատակով կատարվել են մշտադիտարկումներ և համապատասխան աշխատանքներ: Արդյունքում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությամբ և ֆինանսավորման ծրագրով նախատեսված մի շարք խնդիրներ լուծվել են: Միաժամանակ առաջացել են նոր պահանջներ և անելիքներ: Արդյունքում Կոմիտեի կողմից մշակվել է «Զրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թվականների ռազմավարության և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

2. Ոռոգում-ջրառ իրականացնող «Զրառ» փակ բաժնետիրական ընկերության, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 14 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 97.473 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը:

2017 թվականի ընթացքում ջրի պաշարների և ջրապահանջարկի, ինչպես նաև ջրօգտագործողների արձագանքների վերլուծությունը փաստում է, որ ջրօգտագործողների կողմից հայտերով ներկայացված ջրապահանջը տարվա սակավաջրության պայմաններում հիմնականում բավարարվել է: Ընթացիկ տարվա ոռոգման համակարգի արդյունավետ գործունեության մասին է վկայում նաև ոռոգման շրջանում կոմիտեի թեժ գծով ստացված բողոքների քանակի և բովանդակության վերլուծությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N22 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Ոռոգման ջրամատակարարման ոլորտում ջրի փաստացի օգտագործումը հաշվի առնող կառավարման» հայեցակարգը: Միաժամանակ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N54-36 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Ոռոգման ջրի մատակարարման ոլորտում ջրի փաստացի օգտագործումը հաշվի առնող կառավարման հայեցակարգի միջոցառումների ծրագիրը»:

Կոմիտեի նախագահի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N161-Ա հրամանով մեկնարկել է ոռոգման համակարգերում SCADA ջրաչափական համակարգի սարքավորումների տեղադրման և շահագործման միջոցառումների գործընթացը: Վերը նշված սարքավորումների տեղադրումն ու շահագործումը (համապատասխան փուլերով) իրականացնելու արդյունքում հիմնականում կանոնակարգվելու են ոռոգման ջրի հաշվառման և համակարգի շահագործման հետ կապված խնդիրները:


3. **Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է փայլիս**, որ 2017 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2017 թվականի համակարգի գանձումը կազմել է շուրջ 21.93 մլրդ դրամ՝ 2016 թվականի 21,83 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 101.9 մլն դրամ (գրաֆիկ 1):

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2017 թվականին կազմել է 87.24%, իսկ ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2017 թվականին կազմել է 64.72 %:


Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 17.78 մլրդ դրամ՝ 2016 թվականի 17.96 մլրդ դրամի դիմաց կամ պակաս է գանձվել շուրջ 176.8 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.15 մլրդ դրամ՝ 2016 թվականի 3.87 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 278.7 մլն դրամ:

**Գրաֆիկ 1. 2007-2017թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների գանձման ցուցանիշների համեմատական վերլուծություն (մլն դրամ)**



Հաշվի առնելով 2017 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ պայմանները՝ համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերաժախս: 2017 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 221.93 մլն կՎտ ժ՝ 2016 թվականի 172.68 մլն կՎտ ժի դիմաց կամ ավել է ծախսվել 49.25 մլն կՎտ ժով (գրաֆիկ 2):

**Գրաֆիկ 2. 2007-2017թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ծախսված էլեկտրաէներգիայի ծախսի վերաբերյալ (մլն կՎտ ժ):**



<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ հաշվետվության համաձայն ապահովվել է ջրի որակի համապատասխանությունը գործող ստանդարտներին:

4. 2017 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 7.6 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

5. 2017 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը՝ Երևան քաղաքում եղել է 23.5 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում 18.5 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում 13.4 ժամ/օր:

6. Շարունակվել է բարելավվել հաշվառման համակարգը: Միաժամանակ համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպության սպասարկման տարածքում բարելավվել է ջրաչափության մակարդակը, բաժանորդների մոտ տեղադրված են 873802 հատ ջրաչափական սարք, որը 2016 թվականի համեմատությամբ ավել է 25387 հատով: Զրաչափությունը կազմում է 90.3 %:

7. 2017 թվականի մայիսի 4-ին ընդունվել է «Ոռոգման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրառի մասին» ՀՀ կառավարության N461-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2017 թվականի ջրառի չափաքանակը սահմանվել է մինչև 170 մլն խոր.մ:

Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովության դեֆիցիտը մասնակի մեղմելու/ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ ընդունվել է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումը: Հետագայում 2017 թվականի հուլիսի 6-ին ընդունվել է ՀՕ-116-Ն օրենքը, որի համաձայն 2017 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաքանակը ավելացվել է 100 մլն խոր.մ-ով և սահմանվել է մինչև 270 մլն խոր.մ:

Վերը նշված օրենքի 1-ին հոդվածով հաստատված Ծրագրի 6-րդ գլխի 6.6-րդ կետի դրույթն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի N1018-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի համաձայն Կոմիտեն ապահովել է «Միջազգային էներգետիկ կորպորացիային» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգի ՀԷԿ-երով անցած ջրաքանակների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

2017 թվականի մայիսի 7-ից սեպտեմբերի 15-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 266.757 մլն խոր.մ ջուր, իսկ Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել 110.819 մլն խոր.մ ջուր: Սևանա լճի մակարդակը 2017 թվականի տարեվերջին կազմել է 1900,42 մ:

8. «Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը 2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված NՏՁԲ-04/36 պայմանագրի համաձայն, հանձնվել է հավատարմագրային կառավարման «Արփա-Սևան» ԲԲԸ-ին: «Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման ծառայություն» ծրագրով Արփա-Սևան թիվ 2 թունելի առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներն իրականացվում են պամանագործ նախատեսված ժամանակացույցին համապատասխան: 2017 թվականին իրականացվել են 1689.54 մլն դրամի աշխատանքներ: Թունելով ջրի բացթողնման արդյունքում աշխատանքները դադարեցվել են 2017 թվականի ապրիլի 15-ին և վերսկսվել են 2017 թվականի հուլիսի 4-ին:

9. 2017 թվականին տեղերում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են բերվել առաջնահերթ իրականացման ենթակա հակահեղեղային միջոցառումներն ու սահմանված կարգով հաշվարկվել դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական

միջոցները. ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 212-Ն և 2017 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու ու ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 447-Ն որոշումներով Կոմիտեին հատկացվել են գումարներ: Հատկացված գումարների հաշվին իրականացվել են ՀՀ Արմավիրի մարզի Բագարան համայնքի տարածքում 40/1-41 սահմանային սյան հատվածում Արաքս գետի ողողված ափի ամրացման, ՀՀ Շիրակի մարզում Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքային, ելքային հարակից լանջերի մաքրման (200մ), ինչպես նաև Արթիկ քաղաքի տարածքով անցնող Բմբուլենց և Մովրովի հեղեղատարների առաջնահերթ հատվածների (1-ին փուլ) մաքրման և ափերի ամրացման աշխատանքները:

10. Կոմիտեն «Բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու ծրագիրը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ կառավարություն: Վերջինս, ղեկավարվելով ՀՀ ջրային օրենսգրքի 91-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 32-րդ և 34-րդ հոդվածներով, նպատակահարմար է գտել այն ներառել «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որը կմշակվի ՀՀ վարչապետի 20.06.2017թ. N 600-Ա որոշմամբ ձևավորված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում:

11. Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում.

**11.1 Վեդու ջրամբարը** նախատեսվում է կառուցել ՀՀ Արարատի մարզում՝ Վեդի գետի աջափնյա Կոտուց սելավատարի վրա, ջրամբարը լցնելու համար ջրաղբյուր են հանդիսանում Վեդի և Խոսրով գետերը:

Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիրն իր մեջ ներառում է.

1) Վեդու 29 մլն խոր.մ ընդհանուր ծավալով պատվարների և օժանդակ կառուցվածքների կառուցում (Փաթեթ N1),

2) Վեդի և Խոսրով գետերի վրա ջրառ հանգույցների կառուցում (Փաթեթ N2),

3) ջրի փոխադրման համակարգի (շուրջ 11 կմ երկարությամբ) կառուցում (Փաթեթ N3 և N4՝ յուրաքանչյուր փեթեթում ներառյալ երկու լոտեր),

4) ոռոգման համակարգի (37 կմ երկարությամբ) կառուցում՝ ջրամբարից մինչև ոռոգման ցանցի գլխամասային հանգույցներ (Փաթեթ N5 և N6՝ յուրաքանչյուր փաթեթում ներառյալ երկու լոտեր),

5) ոռոգման ցանցի (ջրամբարի իշխման տակ գտնվող 3200 հա հողատարածքների ոռոգման ցանցի վերականգնում) վերակառուցում,

6) նոր տեխնոլոգիաների տեղադրում փորձնական տարածքներում՝ կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգեր:

Ա/թ մարտ ամսին տրվել է Վեդու ջրամբարի պատվարի շինարարական աշխատանքների մեկնարկը: Ավարտվել են դաշտային գետտեխնիկական հետազոտությունները ու գեոդեզիական ուսումնասիրությունները և շուտով պատրաստ կլինի նաև ամբողջական մանրամասն աշխատանքային նախագիծը: Խորհրդատուի հետ

կազմակերպվել են հանդիպումներ և քննարկվել են կապալառուի կողմից ներկայացված նախագծային լուծումները: Կապալառուն արդեն ավարտել է մոբիլիզացիոն աշխատանքները, ենթակառուցվածքները՝ գազ, խմելու ջուր, էլ սնուցման գիծ և ճանապարհ, կառուցումը: Ներկայումս ընթանում են Պատվարների հիմքի և Վարարային ջրհեռի փորման աշխատանքները, ինչպես նաև ավարտին է մոտենում ոռոգման ջրանցքի (կուլվերտ) հողային աշխատանքները:

Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ոռոգման ցանցի վերակառուցման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթի տեխնիկական առաջարկները ներկայացվել են սույն թվականի դեկտեմբերի 25-ին: Ներկայումս ընթանում է մրցութային առաջարկների գնահատման գործընթացը:

**11.2 Կապսի կիսակառույց ջրամբարը** գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի քաղաքից դեպի հյուսիս 22 կմ հեռավորության վրա գտնվող Ախուրյանի գետահովտում: Կապսի պատվարի շինարարական աշխատանքները դադարեցվել են 1994 թվականին. իրականացվել է միայն 20մ բարձրությամբ պատվարի մարմնի լիցք: Կիսավարտ պատվարը ներկայումս իրենից վտանգ է ներկայացնում, քանի որ թունելի փլուզման կամ մեծ վարարման դեպքում կիսակառույց ջրամբարում արտահոսք կլինի պատվարի վրայով՝ ճեղքելով պատվարը: Դա մեծ վնասներ կհասցնի պատվարի ստորին բիեֆում գտնվող համայնքներին, այդ թվում կծածկի Գյումրի քաղաքի մի մասը: Կապսի ջրամբարի շինարարական թունելի մուտքային, ելքային հարակից լանջերի մաքրման աշխատանքներն ընդգրկվել են հակահեղեղային միջոցառումների ծրագրում: ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N212-Ն որոշմամբ գումար է հատկացվել: Շինարարական աշխատանքներն ավարտված են:

<<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1>> նախատեսվում է կառուցել ընդհանուր 25 մլն. խոր.մ ծավալով ջրամբարի պատվարը: 25 մլն խոր.մ. ծավալով ջրամբարը կբարձրացնի Շիրակի ջրանցքի իշխման տակ գտնվող շուրջ 12325 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով, անխափան և հուսալի ոռոգում կապահովի շուրջ 2280 հա հողատարածքների համար՝ տարեկան խնայելով 1,3 մլն կՎտ Ժ էլեկտրաէներգիա:

Ներկայումս ընթանում են Կապսի ջրամբարի կառուցման մանրամասն նախագծման աշխատանքները, ավարտվել են երկրաբանական հետազոտությունները, գեոդեզիական ուսումնասիրությունները, սեյսմիկական և գեոֆիզիկական հետազոտությունները: Տեղի է ունեցել փորձագետների հանձնաժողովի հանդիպում, որի ընթացքում քննարկվել են նախագծային լուծումները:

<<ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 2>> նախատեսվում է Կումայրի ոռոգման թունելի, ջրի տեղափոխող ինքնահոս խողովակաշարի և շուրջ 750 հա ոռոգելի տարածքներում ոռոգման ցանցի կառուցման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների սարքավորումների ձեռքբերման և տեղադրման համար: Ներկայումս վարկային համաձայնագրի առանձին համաձայնագրի նախագիծը գտնվում է քննարկման փուլում:

**11.3 Մաստարայի ջրամբարը** նախատեսվում է կառուցել ՀՀ Արմավիրի մարզում՝ Սելավ Մաստարա գետահովտում: Ջրամբարը նախատեսվում է լցնել Սելավ Մաստարա և Ախուրյան գետերի ազատ հոսքով: Ջրամբարը նախատեսվում է կառուցել 10.2 մլն խոր.մ ընդհանուր ծավալով:

Իրականացվել է Սելավ Մաստարա ջրամբարի ուսումնասիրություն: 2017 թվականի ընթացքում մրցութային կարգով իրականացվել են համապատասխան խորհրդատուների ընտրության աշխատանքները: Տեխնիկատնտեսական ուսումնասիրության աշխատանքներն արդեն իսկ մեկնարկել են, ավարտը նախատեսվում է 2018 թվականի առաջին եռամսյակում: Դրամաշնորհը, որը կազմում է 670.0 հազ ԱՄՆ դոլար, տրամադրել է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ինստիտուցիոնալ զարգացման ծրագրերի

հավատարմագրային հիմնադրամը: Ջրամբարի կառուցման արդյունքում կապահովվի 3794 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, կավելանա լրացուցիչ 590 հա ներկայումս չմշակվող ոռոգելի տարածք, կտնտեսվի տարեկան շուրջ 2.1 մլն էլեկտրաէներգիա, կկրճատվի ստորգետնյա ավազանից իրականացվող ջրառը:

**11.4 Փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրի շրջանակներում** Կոմիտեն <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ-ի հետ համատեղ քննարկել է հանրապետությունում փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագրերի իրականացման հնարավորությունները և առանձնացրել առաջնահերթ կառուցման ենթակա 11 ջրամբարներ՝ հիմք ընդունելով նախնական գնահատմամբ տեխնիկատնտեսական նպատակահարմարության ցուցանիշները:

Պետություն-մասնավոր գործակցության ակտիվացման քաղաքականությամբ առաջնորդվելով՝ Կոմիտեն նախանշել է նաև փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրերը ՊՄԳ շրջանակներում իրականացնելու տարբերակներ՝ միաժամանակ գնահատելով ծրագրի իրականացման հարակից բիզնես հետաքրքրության շրջանակները:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ըստ առանձին ջրամբարների, կատարել առավել մանրամասն ուսումնասիրություններ՝ ծրագրերի իրականացվելիությունը գնահատելու և հետագայում սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

12. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերով իրականացվել են՝

1) 189 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ,

2) Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

13. 2017 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 114 կմ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և ոռոգման խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2017 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

2017 թվականի << էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգում կարևորվել են հետևյալ հիմնական աշխատանքների իրականացումը՝

1) <<Վեոլիա Ջուր>>, <<Ջրառ>> և <<Մելիորացիա>> փակ բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

2) Խմելու ջրի ոլորտում բարեփոխումների շարունակականության ապահովում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման արդյունավետության բարելավում, վարձակալի պայմանագրային պարտականությունների վերահսկման ապահովում:

3) Վարձակալի հետ կնքված վարձակալության պայմանագրով նախատեսված 2017թ. համար հաշվետվությունների ուսումնասիրում և գնահատում:

4) «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքներից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման բարելավմանն ուղղված ուսումնասիրություններ:

5) Կոյուղու մաքրման կայանների կառուցման աշխատանքների նախապատրաստում և իրականացում:

6) Ոռոգման ջրանցքների, ջրատարների և պոմպակայանների վերականգնում և նորոգում, ինչպես նաև ինքնահոս համակարգերի կառուցում:

7) Ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստման և ջրամբարաշինական ծրագրերի իրականացման ապահովում:

8) Ոռոգման ոլորտում կառուցվածքային բարեփոխումների շարունակականության ապահովում, մասնակցային կառավարման ամրապնդում, ջրօգտագործողների հետ առավելագույնս թափանցիկ և նոր որակի հարաբերությունների ներդրում:

9) Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման ապահովում: